

դրվի մը առաջին նուիրական պարտա-
քին է ընտրելոյն յատկութիւնները
լաւ ընկելու և խմանալ, տեղեկանալ
նորա անցեալին և ըստ այնմ առաջ-
նորդական փափակ պաշտօնին կողմը
Սակայն, խմադիր Տէր, յիշեալ
վարդապետին պատմական փառաւոր
անցեալը նկատողութեան տուելով,
կը համարձակիմ ըսել թէ՛ Ազգային
վարչութեան խառն ժողովն իւր այս
ընտրութեան մէջ չարացար սխալած
և խաբուած է: Եւ երանի թէ մեր
այս գրաշը ուշադրութեան առնուե-
լով յիշեալ վարդապետը ի փար-
բերդ կըրկեն: Ահաւասիկ նորա անց-
եալ կենաց մէկ համառօտ տեղե-
կադիրը:

Այս վարդապետը ծնած է Կէյ-
վէյի Միջագիւղը, և ինչպէս իւր մա-
կանունէն կը յայտնուի, հայրը նոյն
գիւղի Տ. Բարթոլոմէոս վաթսմա-
եալ քահանայն եղած է, որ իւր բը-
նական յատկութիւնները որդւոյն
ժառանգ թողլով հեռացած է յաշ-
խարհէն:

Սոյն Ներսէսը յաճողելով Արմա-
շու վանուց ժառանգաւորաց ուսում
նարանին մէջ ընդունուելու, կը յա-
ռաջագիւծ մինչև Եղիշէն և Աւետա-
րանէն աշխարհաբառ թարգմանու-
թիւններ ընելու ստորին փիմակը, ու
հոն առ ի չդոյնէ լատագունին Գէորգ
սրբազանի ձեռամբ վարդապետ կը
ձեռնադրուի. ալ այնուհետեւ կը
բացուի իւր առջեւ համաձայնութեան
և աներկիւղութեան ասպարէզ:

Դպրոցական կամ վանական կե-
նաց մէջ իւր յառաջադիմութեան
ստորիմանին համառօտ նկարագրու-
թիւնը բաւ կը համարիմք, և կանց-
նիմք կրօնական պաշտօնին մէջ ազ-
գին շահուցը համաձայն ըրած ծա-
ռայութիւններուն ու զոհողութիւն-
ներուն: Ահա թուեմ ձեզ մի քանիսն:

Ա իւր ժառանգական բնաւո-
րութեան պահանջմանց համեմատ
առաջին անգամ կը փախչի վանքէն
և կը հասնի մինչև իւր հայրենիքը,
հոն վեր ի վայր կընէ ռամիկ ժողո-
վարդը և դիւրաւ կը ցանէ անոնց
մէջ երկպառակութեան սրտով, որ
աճելով կը հասնի մինչև այն կէտը՝
յորումնոյն գիւղի բնակիչներուն մէկ
մասը կորուցէ և բաժնուելով կանցնի
անկէ կէս ժամու չափ ճանապարհ
հեռաւորութեամբ դէպ ի կէյովէ և
հոն գիւղ մը կը հաստատէ Ելմէ ան-
ւամբ. այն խեղճ գիւղը որ դպրոցէ
և եկեղեցիէ զուրկ չուտով կը հը-
րապուրի Ամերիկեան սրտորդներու
համադիր թերութեան թիւններէն և
խառնութեան թիւններէն: Եւ չայլական
կեղեցին Ամերիկայի Բոստըն հետ կը
փոխէ: Ահա ազգակիործան չարիք մը
որոյ սկզբնապատճառը Ներսէս վար-
դապետի փառասիրութիւնն ու քի-
նախադրութիւնն եղած է:

Բ. Նշանաւոր է յիշեալ վարդա-
պետին՝ հանրածանօթ Ձիլիկիւրեանի
հետ հաստատել նկրտած այն յոռի
դրութիւնը, որ կը ճանչցուէր Վաւ-
սաւորչական ընկերութիւն անուն
տակ և որ սոյն երկուքն երեւակա-
յութեան ճշգրտու պատկերն է: Այս
վարդապետն է որ հանրածանօթ Ձի-
լիկիւրեանի հետ ձեռք ձեռքի տը-
ւած, Հայկական եկեղեցւոյ ընդու-
նած վարդապետութիւնը փոխեց,
Մաշտոցը սրբադրեց, շարականը սըր-
բադրեց, խորհրդատեարերը սրբադ-
րեց: Ի Բերա Բաղրքականի մը տան
մէջ ժամանակ մը իւր պաշտօնը ցուց-
նող հանգամանքներէն պարզուած
աղջիկներ դատարարակերտ գործը
և չեմ յիշեր Աւետարներ քանիք
ընդ թուոյն մէջ իբրեւ բողոքական
Հայկական եկեղեցւոյ դէմ ժայթքած
անուր հայհոյանքները, գալիս քին

տեղ ֆէն մը դրած՝ առանց վերադ-
առի ի լիմօն—խակէլէսի գաղնօնե-
րուն մէջ կատարած Բաղնի տօնա-
խմբութիւնը խիստ սքանչելի յիշա-
տակներ կարծեցին իւր փառաւոր
անցելոյն վրայ . . .

Չենք գիտեր թէ այսօրի գայ-
թակական անցեալ ունեցող վարդա-
պետի միջնապէս առաջնորդական պաշ-
տօն յանձնելու կը համարձակի Ազ-
գային Կեդրոնական վարչութեան
խառն ժողովը:

Գ. Վերջին տարիներս չորս կամ
հինգ տարւոյ չափ Արմաշու Գեղ-
եանց գիւղերովի վարժարանին մէջ
վարած Հոգաբարձութեան պաշտօնը
կապացուցանէ թէ սոյն անձը, ա-
ռանց փոխելու իւր նախկին յոռի
և եպերելի բնաւորութիւններն ու
ընթացքը, բազադրեալ շահու կա-
նոնով բազմապատկել և արդիւնա-
ւորել է: Նոյն վանքին վրայ ծանօ-
թութիւն ունեցող բոլոր ազգայինք
քաջ խելամուտ են այն մեծ յեղա-
փոխութեան, որ վարժարանին չոր-
բորդ չորսին մէջ սկսաւ և բոլոր մի-
արանութեան մէջ առեւտրութեան և
հակառակութեան ոգին աճելով հա-
սաւ մինչև աշակերտաց մէջ, այնպէս
որ միարանութիւնը մէկմէկու դէմ,
ունանք վարժարանին դէմ, վարժա-
րանը միարանութեան դէմ՝ գրեթէ
պատերազմ մղեցին: Այս տեղի ու-
նեցած անցքերը Ներսէս վարդապե-
տի հոգաբարձութիւն ընելու դոյզն
ինչ կարողութիւն չունենալէն, հա-
կառակապարտութենէն, յամենայնիւ ե-
տեւիւն ցուցնելէն առաջ եկան:
Այս խռովութեանց առջև վանքին
վանահայրն ալ բան մ'ընելու չհա-
մարձակեցաւ. իրաւասօնութիւն չը-
նելէ զատ, հոգմը որ կողմէն փէշը՝
այն կողմը կը ծռէր:

Հետեւաբար, Ներսէս վարդապե-
տին եղաւ Արմաշու վանքին գիւղեր-
ովի դպրոցը տալիս ու վրայ ընողը,
Ներսէս վարդապետն եղաւ միաբա-
նութեան մէջ գծաւորութիւն և տա-
լութիւն յարուցանողը. ի մի բան,
Ներսէս վարդապետն եղաւ վանքին
արդի ցաւալի կացութեան բուն պատ-
ճառը:

Խմբագիր տէր, ինչպէս ըսինք,
Ներսէս վարդապետի վարուց մէկ
համառօտ նկարագրութիւնն է այս:

Եւնք կըրկաւարիմք որ դաւառ-
ներն աղքատին պաշտօնով գնացող
վարդապետք ուսումնական ըլլան
և խռովասէր բնաւորութիւն չունե-
նան: Վա՛յ այն դաւառի Հայ ժողո-
վըրդոց, որ Ներսէս վարդապետի
պէս մէկն իրենց առաջնորդ կունե-
նան:

Փորձեալն կրկին փորձել յիմա-
րութիւն է:

Ընդունեցէք մեծարանքս և շը-
նորհակալիքս
ՎԱԿԱՐՇ

Պօքան (Բումանիս)
Տ/ 17 յուլիս 1879.

. . . Խմբագիր Մատիս պատուա-
կան լրագրոյ:

Դիտարկել քաջապէս որ սիրելի
աղբերնուս յառաջդիմութեան լու-
րերն ընդ միշտ Ձեր ազգօգուտ լը-
րագրին միջոցաւ հասարակութեան
առջև հանեն Ձեր սիրելի փափաք-
ներէն նախամեծարն է, որ վան կը
փութամ տեղի ունեցած աղքատին
հանգիսի մը նկարագրութիւնն Ձեզ
հաղորդել ինքզնիւ միանգամայն որ
Ձեր ազգօգուտ թերթերէն միայն
միջոցաւ բարեհաճէք հրատարակել:
1879 մայիս 28 անգղոյս Հռիփ-
սիմեանց անունով հիմնուած դպրո-
ցին տարեդարձի հանդէսն կատար-

ւեցաւ շքեղ կերպով. այսօրէս յետ
աւարտման եկեղեցւոյ, Հռիփսիմ-
եանց վարժարանին աշակերտուհիք
և Գեղեցեանց վարժարանին աշա-
կերտք երկու կողմէն արանց և կա-
նոնց բազմութեամբ աղքատին եր-
գելով եկեղեցւոյս պարտէզն երան,
ուր անդ առաջուց պատրաստուած
էր նստարաններով ի պատիւ հանգի-
սականաց. և եկեղեցւոյ սովորական
աղօթքը մատուցուելէն յետոյ, յա-
ջորդեցին փոխ ի փոխ օրհարդաց և
մանչ տղոց մէկ քանի աղքատին սըր-
տաշարժ երգերն, և ապա հետեւեալ
Հայերէն ճառն՝ զոր ընտիր բնական
և մաքուր արտասանութեամբ ըն-
թերցաւ Օրհորդ Մարիամ Գաբրիէլ-
եան. ետքը երգով մը ընդմիջելով
Բումաներէն ճառ մ'ալ ընթերցաւ
Օրհորդ Մարիամ խաղաւան, նոյն-
պէս քաջ առաջանութեամբ, որոյ
ետեւէն դարձեալ աղքատին երգերով
և քահանային մանաւոր օրհնու-
թեամբ հանգէսն աւարտեցաւ ի
մեծ շնորհակալութիւն հանդիսակա-
նաց, որոնք աղքատին ոգւով ուրախ
և զուարթ սրտիւ և ժպիտ ի շըր-
թունս մեկնեցան իւրեանց տունն:

Ահա ճառին օրինակն զոր Ձեզ կը
յղենք:

Մեծապատիւ Տեառք և Անուափայլ
Տիկնայք:

Այսօր ջինջ և մաքուր սէր մը սիրտս
և ոգիս կըբարձրէ և խորխորտանաց թեւեր
ինձ կը պարզէ բոլոր աշխուհի ընկերացս
կողմանէ թոթովաթոս շրթաւթ թարգ-
ման կանգնել այս սրբազան հանդիսիս
միջապայը, ուր աշխուհիս և փշտանձն
հայրենասէր սրտեր ակումբ բոլորած են
տօնել աղքատին հանգէս մը, այն է շը-
սիրտմեանց անուշովն հիմնուած դըպ-
րոցիս տարեդարձի հանգէսն, ուր և ես
իրեւ մի անպափայլ երկնային բաների
մը նման կը դամ աղբ առնել Ձեզ հան-
գիսիս սրբաշնորհութիւն բերկրալիւ խըն-
դութեամբ:

Յուշ ձեզ, յուշ ձեզ, Տեառք իմ և
Տիկնայք, հանդիսիս խորհուրդն բարձր
և փնտ՝ է և ամենայն սիրոյ և յարգա-
նաց արժանի. քանզի տառ դպրոցիս հը-
րազգործ սրտին մէջ պահուած է Հա-
յուն կենսատու ճառագայթն. աստ հա-
մայն Հայութեան բարենորոգման բազ-
մալի յոյսն կը տածի. ա՛հ, պատուական
Տեառք իմ և Տիկնայք, քաջայայտ եղիք
Ձեր դատեցը դատարարակութեան վրայ.
Նոքա անուշտ մեծապէս ակտի նպատակն
աղքատին լուսաւորութեան և յառաջդի-
մութեան սրբազան ջանքն լաւ և սիրտի
փայլեցնեն, այնպիսի ջանք մը որ շատ
ազգաց պաշտօնի առաջնորդն է: Նա է
լուսեղէն սիւն ամալոյ որ կ'առաջնորդէ
ի խաւարէ ի լոյս, ի մահուանէ ի կեանս,
ի ստրկութենէ յազատութիւն, ի թը-
լուստութենէ յերանկեղութիւն, ի լոյս ու-
րեմն, ի լոյս և կրթութիւն տուէր գեղե-
ցիկ սեռին, ո՛վ Հայեր. լոյս տուէր մեզ,
յայնժամ և միայն յայնժամ ազատու-
թիւն և փառք Հայութեան:

Դիտեք քաջապէս, պատուական Տեառք
և Տիկնայք, դուք Հայաստանի Սնույ
Մայր քաղաքէն՝ Ձեր հայրենի աշխարհէն՝
աստ փառանդի կը բնակիք. կը ծծէք
օդ մը որ Ձերինը չէ. այն Անուշ՝ որուն
երկնային կամարաց վրայ Հայկազանց
փառաց լուսալիւ տառն կը փայլէր ճա-
նաչագողէ յարեկելի մինչև յարեմուտս.
Իսկ այսօր, ո՛վ, թէ պէտ և նստմ սե սե
ս մաքրով քողարկեալ, ոչ սահայն բնու-
թիւն՝ որ դոմեն որ իւրեանց ջանից և
փափագանաց համեմատ պատրաստ է
վարձատրել, միայն սիրել, յուսող և
գործել պէտք է անխնայ շարունակեցէք
Ձեր ազգանուէր ջանքերն, որով միայն
կարող է Բումանիոյ սահմանաց վրայ պը-
սըլացող Հայ դառլթակնութիւնն իր դո-
յութիւնն պահել և Հայ անունովն պար-
ծել:

Վերջապէս, Տեառք և Տիկնայք, խոս-
քով համառօտել կը փութամ, այլ բոցա-
վառ ողւայ խաղերովու Ձեր ականջին
հնչեցնել կը փախաղի վերջի պատգամս,
թէ հայրենասիրութիւնն Ձեր շարժիչ ու-

րութիւնն ըլլայ. հայրենասիրութիւնն՝ որ
շատ ազգաց սիրելի և պաշտելի միւռն
թեան կայն է, անոյ միայն կարող է
դոժ են ազգերն յառաջ ընթանալ և ա-
զատութիւն փայլել. դուք ևս անուշտ
նորա սրբազան հրովն պէտք է վառուիք
և յարատեւէք ձեր ազգասէր ջանքերն.
Ահա՛ղ, առանց աղքատէր ջանից, առանց
հայրենասիրութեան, Հայութիւնը մեծ է
ի կորուստ. լոյս և կրթութիւն և ազգա-
յին լեզու ջանքեցէք մեզ անխառն կըրո-
նից հետո Այս՝ մեզ՝ օրհորդացս աղա-
յին լեզու պէտք է որ Հայութիւնը կան-
գուն մնայ և սպրի. քանզի հայուհեաց
ձեռքն է Հայուն ազգայն իւր համայն
փառքերովն. անուշտ Նոքա՛ որ մը պիտի
դոյնէ «Անցցեն» Հայ ազգասէր և հայրե-
նասէր Բումանիոյ որ կարող են գլեղ
կորստեան անդունդէն ազատել ի պար-
ծանս համայն Հայութեան: Մ

(Որ Մարիամ Գաբրիէլէն

Այսու պատահութեամբ պարտ
անձին կը համարիմ՝ նաեւ հետեւեալ
տեղեկութիւնը Ձեզ հաղորդել թէ
անցեալ յունիս ամսոյ մէջ աղքատին
երկսեւ վարժարանաց տարեկան
հարցաքննութիւնն անգլի ունենա-
լով և մեք ևս ներկայ դանաւելով և
տեսնելով թէ՛ աշակերտահեաց և
թէ՛ մանչ աղքատ Հայկաբանութեան
մէջ ըստ բաւականի յառաջադիմու-
թիւնը, սրտերնուս մէջ զգացած ու-
րախութիւնը չկարեմք զանց տունել
և հրապարակաւ չյայտնել մանա-
ւանդ խրախուսիչ յայտն տալով ա-
սրադային, որն որ Բումանիոյ Հա-
յուն համար ներկայ պարագայից
մէջ աղքատին լեզուն մշակում կեն-
սական խնդիր մը համարելու է:

Բարեհաճեցէք. խմբագիր Տէր,
յարգ անացս հաւատարմը ընդունելու:
Ձերումը իս. յի.

Կարգէր Գ. Կեանքեան

Ի Լ Ա Ն

Նիզամիյէ սէպլէ բոմիսիօնը իշուն
սոքան պէշ սէնէսի աղօթթօս իպ-
թիստարնտան սոքան ալթը սէնէսի
մարթը նիհայէթինէ քատար պէհէր
հափթա իկիրմի պէշէր պին գըլէսի
թէսլիմ օլունմաք վէ նըսֆը Նարսի
վէ նըսֆը տիկէրի Մարսիլիանն օ-
լարաք շաւուրթ մուղարթէրէսի իլէ
միւպայեա օլունմաքը էվէլմէ իլան
օլունման սէքիլ եիւղ պին քըլէ Բա-
թաթէլին պէհէր գըլէսի քըրք վա-
մուղը բումինին եիկիրմի սէքիլիննի
ճումա իրթէսի կիւնիւ դարարը դա-
թիսի վէրլիլմէյինտէն, ի թաւընա
թալիպ օլունմաքը եիվմի մէքըլթաթ
ճարի ճումայի աքթըլիլէ կէլմէլէրի:
26 թէմուղ 1879

Պատը Սէրապէրի

Նիզամիյէ էրպըք անպարնա օն
պէշ պին գըլէսին իկիրմի պէշ պին
գըլէյէ քատար մահֆուղ նումունէ-
սի շաւուրթ մուղարթէրէսի իլէ միւ-
պայեա օլունմաքը թրիլիա դէյթու-
նըն պէհէր գըլէսի իւշ գըլ օն վա-
րայա թալիպի էօհաթէս նոթ օլունպ
թէմուղը բումինին օթուղուննու բա-
դար իրթէսի կիւնիւ միւնաքատար
նըն իճրասը իլէ քարարը դաթիլի վէ-
րլիլմէյինտէն, ի թաւընա թալիպ օ-
լունմաքը եիվմի մէքըլթաթ ճարի
ճումայի աքթըլիլէ կէլմէլէրի:
26 թէմուղ 1879

Պատը Սէրապէրի

Նիզամիյէ էրպիս անպարն իշուն
մահֆուղ նումունէսի վեճիլէ սէօրթ
պին արշունտան սէօրթ պին պէշ
եիւղ արշընա քատար միւպայեա օ-
լունմաքը էնսիլ Լաճիլէրտ իսիլիա
ապատընն շաւուրթ մուղարթէրէ:

$h = 1 \text{ } \omega = 1 \text{ } \mu = 1$		$h = 1 \text{ } \omega = 1 \text{ } \mu = 1$	
J, ω	J, ω	J, ω	J, ω
11 30	5 25	11 30	5 25
12	6	12	6
12 30	6 35	12 30	6 25
1	8	1	8
1 30	8 40	1 30	8 45
2	9 20	2	9 20
2 30	10	2 30	10
3 5	10 30	3 5	10 30
3 45	11	3 45	11 5
4 30	11 30	4 30	11 35
5	12	5	12 5